ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.9-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.9 կետով նախատեսված «Armenia.travel վեբ-կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.9 կետով նախատեսված «Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում» միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝ «Քոնսեփթ» ՍՊԸ–ի կողմից:

2. armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում «Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում» միջոցառման իրականացման նպատակով հաղթող է ճանաչվել «Քոնսեփթ» ՍՊԸ-ն:

Որոշեցին՝

1. Հանձնաժողովը միաձայն որոշեց հաղթող ճանաչել **«Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ «Քոնսեփթ» ՍՊԸ-ն:

2. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր **«Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար՝

«Քոնսեփթ» ՍՊԸ-ի հետ՝ 33 330 000 (երեսուներեք միլիոն երեք հարյուր երեսուն հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Աշոտյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____